«1+4»-Ի ԱՌԱՋԱԴԵՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

# ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԳՈՐԾԵՐԴ, «1+4» ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՒՍԱՆՈՂ

*2010 թվականից ի վեր, երկրի ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ հայկական դպրոցների շրջանավարտներին մեծ քննությամբ բուհ ընդունվելու հնարավորություն ընձեռող Վրաստանի իշխանության «1+4» պետական ծրագրի ընդունումից հետո, այդ պատվավոր շարքը համալսարանում համալրում են նաեւ հայ երիտասարդները: Ի.Ջավախիշվիլու պետական համալսարանի մասնավորապես տնտեսագիտական ֆակուլտետում ներկայումս մասնագիտանում է երկրի հայկական դպրոցների 150 շրջանավարտ, ու նրանք այս օրերին՝ նոյեմբերի 7-26-ը, զբաղված են համալսարանի հերթական՝ միջանկյալ քննություններով: Ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողուհի Դիանա Խչոյանը՝ քննաշրջանի իր սուղ ժամանակը սիրով տրամադրեց մեզ եւ օգնեց պարզաբանել ընթացող քննաշրջանի ու նրանում մեր ուսանողի առաջադիմությանը վերաբերող հարցեր: Ի դեպ, Դիանան ծնվել ու բնակվում է Ծալկայի մունիցիպալիտետի Խաչգյուղում, Թբիլիսիում այժմ ապրում է վարձով, քրոջ՝ Մարինայի հետ: Դիանան սովորում է համալսարանի Տնտեսագիտական ֆակուլտետի անվճար բաժնում, իսկ քույրը՝ Մարինան՝ նույն համալսարանի վրացերենի ուսուցման զրո կուրսում:*



***- Դիանա, ինչպե՞ս են ուսանողական գործերդ, կկարողանա՞ս հաղթահարել առաջիկա քննությունները:***

- Հինգ քննությունն էլ արդեն հաջող արդյունքներով հանձնել եմ:

***- Ի՞նչ է նշանակում «միջանկյալ» քննություններ:***

- Այսպես կոչված, «միջանկյալ» քննությունները նախապատրաստում են կիսամյակի, այսինքն՝ հաջորդող հունվարյան քննաշրջանը: Եթե «միջանկյալ» քննություններին բարձր միավորներ ես հավաքում, ապա այն հնարավորություն է տալիս կիսամյակում ունենալ մինիմումից ավելի միավորներ (50-100):

***- Կարող ես վստահորեն ասել, որ լիարժեք տիրապետում ես վրացերենին:***

- Իհարկե, ոչ, դեռ ճանապարհին եմ: Հատկանշական է, որ այդ հարցում դասախոսները հնարավորինս աջակցում են: Օրինակ, «Ֆինանսական հաշվառում» առարկան դժվարությամբ եմ յուրացնում: Զգալով, որ դա կապված է առարկայի տերմինալոգիան չհասկանալու հանգամանքի հետ, ինչը իմ կողմից վրացերենին խորապես չտիրապետելու հետեւանքն է, դասախոսս մշտապես մանրամասն բացատրում ու ընդառաջող պատասխաններ է տալիս հարցերիս: Կարծում եմ՝ երբեւիցե չեն աղարտվի համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մասին ունեցածս դրական պատկերացումները:

***- «1+4»-ով ընդունվածները կարողանո՞ւմ են համալսարանական միջոցառումներին մրցակցել վրացի համակուրսեցիների հետ, մասնակցել միջոցառումներին, բեմից ներկայանալ:***

- Տարբեր խորագրերով ընդհանուր միջոցառումներին մեր ուսանողները, անկեղծ ասած, պասսիվ են... մերոնք, բնականաբար, խուսափում են անհաջող կամ սխալներով ելույթից: Միջոցառումներին ակտիվություն չցուցաբերելու իրական պատճառը ոչ թե մեր գիտելիքի պակասն է, այլ լեզվական բարիերը, լեզվին ոչ լիարժեք տիրապետելը:

***- Ինչպիսի՞ն ես պատկերացնում քեզ՝ որպես ապագա տնտեսագետ:***

- Երեւի թե, տնտեսագետը պետք է հնարավորինս ինքնավստահ, աշխատասեր լինի, խուսափի շտապողականությունից, ունենա պատասխանատվության զգացում...

***- Անկասկած քո առօրյայում պարտադիր է համակարգիչը, իսկ հեռուստացո՞ւյց, գի՞րք, թե՞րթ...***

- Հեռուստացույցը՝ համեմատաբար պակաս է, թերթը՝ նույնպես, բայց գեղարվեստական գրքի պահանջը մեծ է: Ամառային արձակուրդներին կարդացի 20-րդ դարի երկրորդ կեսի վիրահայ գրող Մկրտիչ Ասլանյանի «Տագնապալի հասակը»: Շատ եմ սիրում կարդալ Պարույր Սեւակ, դպրոցում միշտ ասմունքել եմ, ի դեպ՝ նաեւ վրացերեն, հատկապես՝ Գալակտիոն Տաբիձեի «უსიყვარულოდ»(«Առանց սիրո») բանաստեղծությունը:

***- Այսօրվա ուսանողական կարգավիճակիդ համար ո՞ւմ ես պարտական:***

- Այդ հարցում մեծ դեր կատարեց իմ ծննդավայր Խաչգյուղի հանրային դպրոցի անգլերենի վաստակաշատ ուսուցիչ Նունե Գալուստյանը, ով իմ մորաքույրն է եւ հնարավորություն ուներ նույնիսկ տանը վերահսկել իմ տնային առաջադրանքների կատարումը. հենց այդ վերահսկումն էր, որ իմ մեջ ձեւավորեց դասին միշտ պատրաստ լինելու ցանկությունը:

*(Հարցազրույցի ժամանակ Դիանան հեռախոսով վրացերեն խոսեց կուրսեցու հետ):*

***- Ովքե՞ր են վրացերենի քո առաջին ուսուցիչները:***

- Դա իմ հարգարժան ուսուցիչների՝ «Վրաց լեզու եւ գրականություն» առարկան դասավանդող Դալի Ճելիձեի ու Անա Խոմերիկիի շնորհիվ է: Նրանք դասերից հետո էլ էին պարապում մեզ հետ, ուշադիր էին մեր արտասանությանը, բառն իր տեղում օգտագործելուն, շեշտը ճիշտ դնելուն եւ, սխալի դեպքում, դասի ժամանակ լիներ, թե դրսում, անմիջապես ուղղում էին... Շատ ուրախ եմ, որ այսօր կարող եմ նրանց երախտագիտությունս հայտնել ու ասել՝ «Շնորհակալություն, իմ լավ ու բարի ուսուցիչներ, ձեր շնորհիվ, ես սովորում եմ վրացական բուհում»:

***- Մոտակա 2-3 տարում դու կունենաս քո կյանքի գործը՝ մասնագիտական նախընտրած աշխատանք, աշխատավարձ, նյութական ապահովություն, ընտանիքիդ աջակցելու ուրախություն. ի՞նչ կավելացնեիր այս շարքին:***

- Մի անտեսանելի ուրախություն էլ կա, որ միայն քոնն է. դա գործի նկատմամբ քո ազնվությունն է, բարեխղճությունը, անմնացորդ կատարած գործի ուրախությունը: Եվ ամենակարեւորն, իմ կարծիքով, այն է, որ քո գործով օգնես մերձավորիդ, շրջապատիդ, օգտակար լինես քո երկրին:

***- Դե', ինչ, Դիանա, հաջողություն քեզ ուսման ասպարեզում եւ հարթ ու կանաչ ճանապարհներ քո կյանքի բոլոր նախաձեռնություններում:***

*Զրուցեց ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ*



# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ✵ ԱՅԼԱԶԱՆ ✵ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

## ՊԱՐԵՆԱՅԻՆ ՃԳՆԱԺԱ՞Մ... ՈՐՔԱՆՈ՞Վ Է ԴԱ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ



***Ուկրաինայում ընթացող պատերազմի պատճառով շատ են գրում պարենի, հատկապես, ցորենի անբավարարության մասին: Նույնիսկ ասում են, որ առանձին երկրներում կարող է սով սկսվել: Որքանո՞վ են նման կանխատեսումները իրատեսական:***

***Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ***

***Բոլնիսի***

Ցավոք, դուք իրավացի եք: Ռուս-ուկրաինական պատերազմը, ընթացիկ տարվա տեւական երաշտը, անոմալ շոգերը, իրոք, լուրջ հիմնախնդիրներ առաջացրին գյուղատնտեսության ոլորտի համար: Բավական է նշել, որ Եվրոպայում, անցյալ տարվա համեմատ, հատիկայինների եւ ոչ միայն հատիկայինների բերքը, գրեթե կիսով չափ նվազել է:

ՄԱԿ-ի Պարենավորման համաշխարհային ծրագրի (WFP) տվյալներով, հոկտեմբերին աշխարհում սովյալների թիվը 2 միլիոնով ավելացել է:

Այդ տվյալների համաձայն, ամենից շատ պարենի մատչելիությունը նվազել է Աֆրիկայի երկրներում, այդ թվում` Մոզամբիկում, Եթովպիայում եւ Քենիայում: Բացի դրանից, պարենի մատչելիությունը նվազել է Մադագասկարում եւ Աֆղանստանում:

Պարենավորման համաշխարհային ծրագրի տվյալների համաձայն, Աֆղանստանում թերասնումից տառապում է երկրի բնակչության ավելի քան 90 տոկոսը:

ՄԱԿ-ի Պարենավորման համաշխարհային ծրագիրը զարգացած երկրներին կոչ է անում հնարավորինս օգնել կարիքավոր երկրներին, առանձնապես ասիական եւ աֆրիկյան երկրներին` հաղթահարելու պարենային ճգնաժամը, մատչելի գներով կամ անվարձահատույց տրամադրել հացահատիկի մարդասիրական օգնություն:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՍՆՈՒՆԴԸ` ՈՐՊԵՍ ՕՐԳԱՆԻԶՄԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ



***Այն, որ սնունդն անհրաժեշտ է օրգանիզմին, հայտնի փաստ է: Այդուհանդերձ, ցանկալի է, թե սննդի ո՞ր տեսակներն են առավել օգտակար, որո՞նք են առավել պահպանում օրգանիզմի կենսունակությունը:***

***Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ***

***Ախալքալաքիի մունցիպալիտետ***

Մեր օրգանիզմին անհրաժեշտ են բազմապիսի նյութեր` սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, վիտամիններ, հանքային աղեր եւ այլն: Եվ յուրաքանչյուրը պետք է լինի համապատասխան քանակությամբ, այս կամ այն նյութի ավելցուկը նույնքան վնասակար է, որքան նրա պակասը: Հավասարակշռված սնունդը պետք է պարունակի 55 տոկոս ածխաջրեր, 15 տոկոս սպիտակուցներ եւ 30 տոկոս ճարպեր: Սննդի կալորիականությունը պետք է համապատասխանի էներգիայի ծախսին: Թերսնումը հանգեցնում է հյուծման ու տարբեր հիվանդությունների, հատկապես` փոքր տարիքում, գերսնումը` գիրացման, որը նույնպես վնասակար է, կարող է առաջացնել նյութափոխանակության խանգարումներ, արյունատար համակարգի եւ սրտի հիվանդություններ:

Միսը, ձուկը, ձուն, կաթնամթերքը պարունակում են սպիտակուցներ եւ օրգանիզմին անհրաժեշտ բազմաթիվ հանքային նյութեր, սակայն նրանց մեջ շատ են ճարպերն ու խոլեստերինը:

Քաղցրավենիքը հարուստ է պարզ ածխաջրերով ու ճարպերով, օգտակար նյութեր քիչ է պարունակում, ունի բարձր կալորիականություն եւ վտանգավոր է ատամների համար, այդ պատճառով քաղցրավենիք պետք է քիչ օգտագործել:

Հացը, կարտոֆիլը, ձավարեղենը պարունակում են օսլա (բարդ ածխաջրեր): Դրանք օրգանիզմին անհրաժեշտ էներգիայի աղբյուր են, սակայն մթերքները հանգեցնում են գիրացման:

Մրգերը եւ բանջարեղենը պարունակում են օրգանիզմին անհրաժեշտ գրեթե բոլոր կենսական վիտամիններն ու հանքային նյութերը, բացի դրանից` կանխում են մի շարք հիվանդություններ, նպաստում բջիջների առողջացմանը, ունեն քիչ կալորիականություն եւ չեն գիրացնում: Այդ պատճառով էլ թարմ միրգ ու բանջարեղեն պետք է շատ օգտագործել:

Իհարկե, չի նշանակում, թե որեւէ սնունդ պետք է բացառել, սակայն յուրաքանչյուրը պետք է օգտագործել այնպիսի քանակությամբ, որպեսզի օգտակար լինի օրգանիզմին:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

## ԱՐԱՐԱՏԸ ԻՐ ՄԵՋ ԿՐՈՒՄ Է ՄՈԼՈՐԱԿԻ ԱՄԵՆԱՀԻՆ ՆԱՎԸ

### ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ



(Սկիզբը` նախորդ համարում)

Իսկ կերի մասը (մոտավորապես ընդհանուր երկարության քառորդ մասը) գնում էր դեպի ջուրը, ըստ որում` ամենածայրի մասը երեք քառորդ մասով ջրի մեջ էր սուզված»: Սկզբում օդաչուների այս զեկույցին ղեկավարությունը, մեղմ ասած, հումորով վերաբերվեց: Եվ սակայն, ինչ-որ հրաշքով օդաչուների բացառիկ հայտնագործության մասին իմացավ Նիկոլայ Երկրորդը: Աստվածավախ կայսրը որոշեց լեռներ ուղարկել մեծ գիտարշավ, որի կազմում էին ինչպես զինվորականներ, այնպես էլ` գիտության ներկայացուցիչներ: Հետազոտողները բավական ժամանակ կորցրին, տապանն ուսումնասիրելու, այդ կախարդական տապանի չափումները, լուսանկարներն ու գծագրերը կազմելու համար: Ավա՜ղ, իրականացված աշխատանքի հաշվետվությունը կայսրին ուղարկվեց Փետրվարյան հեղափոխությունից երկու շաբաթ առաջ, որից հետո բոլոր փաստաթղթերը եւ, ամենակարեւորը, տապանի լուսանկարները, անհետ կորան:

#### ԶԱՐՄԱՆԱԼԻ ԴՈՒՐԳԱՄՆԵՐ

Քաղաքական կատակլիզմները` 20-րդ դարի պատերազմներն ու հեղափոխությունները, աշխարհի հանրությանը ժամանակավորապես ստիպեցին մոռանալ Նոյյան տապանի մասին: Իսկ 1948 թվականին տեղի ունեցած իրադարձությունը մարդկանց նորից ստիպեց խոսել մասունքի մասին: Այդ տարվա ամռանը լեռներում տեղի ունեցավ հզոր երկրաշարժ, որն այդտեղ ապրող քրդերի խոսքով, ուղեկցվում էր «պայծառ լույսով, լուսավորելով տարածքը»: Լեռ բարձրացող համարձակները պատմում էին, որ մոլեգնած տարերքը բառիս բուն իմաստով «դուրս էր հանել» հինավուրց նավը հողից, իսկ նրա վրա ընկած ժայռը նավը կիսել էր երկու մասի: Ցավոք, այս ամենը փաստող լուսանկարներ չկան: Եվ սակայն, Նոյյան տապանի հանդեպ կրկին ծնված հետաքրքրությունը նորից ստիպեց լեռ բարձրանալ նորանոր հետազոտող-սիրահարների: Բախտն ամենից շատ ժպտաց ֆրանսիացի Ֆերնան Նավարրային, որն Արարատն ուսումնասիրեց 1955 թվականին: Ճիշտ է ճանապարհորդը, չգիտես ինչու, վերադարձավ առանց լուսանկարների, բայց փոխարենը փայտե տախտակով, որն իբր հինավուրց նավի տախտակապատի մի մասն էր: Զարմանալի է, բայց այս համոզմունքը գտավ իր անուղղակի հաստատումը: Իր հաղթանշանը նա հետազոտման ուղարկեց ԱՄՆ, Բորդոյի ու Մադրիդի համալսարաններ, ուր իրականացվեց տախտակի ռադիոածխածնային ախտորոշումը. Նավարրան պարզեց, որ իր գյուտը 5000 տարեկան է:

Ֆրանսիացուն հաջորդեց ոմն սանֆրանսիսկոցի Ջոն Լիբինը: Ամերիկացին հաստատում էր, որ երազում իր առջեւ բացվել էր երանելի տապանը գտնելու վայրը, եւ նա որոշել էր ցանկացած պարագայում գտնել այն: Եվ սակայն, այս խեղճին խանգարեց տարօրինակ... արջը, որը սկսեց քարեր նետել ճանապարհորդի վրա ու նրան հետ կանգնեցրեց իր նպատակից: Որքան կշարունակվեին Նոյյան տապանի որոնումները` դժվար է ասել, բայց 1974 թվականին Թուրքիայի իշխանությունները պետական սահմանները հսկելու նպատակով այդ մասում ռազմակայաններ տեղադրեցին ու փակեցին տարածաշրջանն այցելուների համար:

Եվ սակայն... 1977 թվականին ամերիկացի Ռոն Վայետիին հաջողվեց ստանալ պաշտոնական թույլտվություն արգելված գոտում պեղումներ իրականացնելու համար: Զարմանալի է, բայց այս գիտնականին ի վերջո հաջողվեց գտնել հինավուրց նավը եւ անցկացնել նրա լիարժեք ուսումնասրությունը: Ստացված արդյունքները ուղղակի ապշեցուցիչ էին: Այսպես, տապանի փայտանյութի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նյութն իսկապես 5000 տարեկան էր եւ նրա օրգանիկան մասամբ պարունակում է հանքային նյութեր, քանի որ նավը երկար ժամանակ գտնվել է սառույցի մեջ: Իսկ նավամբարի նմուշները, հետագայում հետազոտված լինելով Թենեսսիի (ԱՄՆ) նահանգում, ապացուցեցին նրանում կենդանիների մորթու եւ գոմաղբի առկայությունը, որն ինչ-որ չափով հաստատում էր բիբլիական լեգենդը: Բայց ամենից շատ Վայետին եւ նրա օգնականներին ապշեցրել էին նավի մեխերն ու դուրգամները: Պարզվել էր, որ դրանք պատրաստվել էին երկաթից եւ տիտանից, որն այսօր ուղղակի աներեւակայելի է թվում: Հասկանալու համար, թե որտեղից կարող էր բիբլիական քարոզիչը հայթայթել երկաթներ հազարավոր տարիներ առաջ, պետք էր նավի նոր ուսումնասիրություն կատարել:

...Պարզապես Նոյյան տապանի հետքերը նորից կորան Արարատի ձյուների մեջ...

**Պատրաստեց ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ**

## Ա Ն Ե Կ Դ Ո Տ Ն Ե Ր

*☺ - Իմացել ե՞ս` Դավիթին հիվանդանոց են տարել;*

*- Ո՞նց, տո, ես երեկ իրան տեսա մի սիրուն աղջկա հետ:*

*- Հա, իրա կինն էլ ա տեսել:*

*☺ - Մամ, կանչեցի՞ր ինձ:*

*- Չէ':*

*- Պապ, կանչեցի՞ր ինձ:*

*- Չէ':*

*- Պապիկ, տատիկ դուք կանչե՞լ եք:*

*- Չէ':*

*- Լաաավ, հարցը տանք այլ կերպ` մենք էսօր հաց ուտելո՞ւ ենք:*

*☺ Ամուսինը կնոջը:*

*- Սիրելիս, որտե՞ղ է մեր շաքարը, երկու ժամ է` չեմ գտնում:*

*- Դու ընդհանրապես ոչինչ չես կարողանում գտնել: Զուգարանում ա, կոֆեի բանկայի մեջ, որի վրա «աղ» ա գրած:*

*☺ Երկու ընկերուհի նստած կոֆե են խմում, մեկ էլ մեկն ասում ա.*

*- Լսի, երեկ գիշերը մարդս ըտենց էլ չեկավ տուն, կարող ա գնացել ա՞ լեւի:*

*- Ախչի, հո դու դեբիլ չե՞ս, խի ես ըտենց վատ-վատ բաների մասին մտածում, կարող ա ընգել ա ավտոյի տակ:*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Հացից հետո ժողովրդի համար ամենակարեւորը դպրոցն է:

***ԺՈՐԺ ԺԱԿ***

Կրթությունն ազատություն է:

***ՊԱՈՒԼՈ ՖՐԵՅՐԵ***

Ուսուցման իսկական առարկան մարդուն նախապատրաստելն է մարդ լինելու համար:

***ՆԻԿՈԼԱՅ ՊԻՐՈԳՈՎ***

Համալսարանը զարգացնում է բոլոր ընդունակությունները, այդ թվում` հիմարությունը:

***ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ***

Եթե ամուսնացած եք, սակայն չունեք կզաքիսի մուշտակ, ադամանդներ եւ թանկարժեք ավտոմեքենա, ապա կարող եք ինքներդ ձեզ շնորհավորել, քանի որ ամուսնացել եք սիրով:

***ՆԻՆԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ***

***«Վրաստանի» ընթերցող***

***Թբիլիսի***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

### ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՉՍՏՈՐԱԳՐԵՑ ՀԱՊԿ-Ի ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

*Նոյեմբերի 23-ին Երեւանում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ, անցկացվեց ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստ, որին մասնակցում էին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը, Ղրղզստանի նախագահ Սադիր Ժապարովը եւ Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը:*



Հավաքական անվտանգության խորհրդի անդամները քննարկեցին միջազգային եւ տարածաշրջանային անվտանգության արդի խնդիրներն ու ՀԱՊԿ գործունեության հիմնական արդյունքները միջնտաշրջանային ժամանակահատվածում:

Ամենակարեւոր հարցերից մեկը ՀԱՊԿ ճգնաժամային արձագանքման համակարգի կատարելագործման եւ Հայաստանին օգնության տրամադրման համատեղ միջոցառումների քննարկումն էր: Խորհրդի նիստի ընթացքում ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերվում են խաղաղապահ ուժերին ժամանակակից սպառազինությամբ, ռազմական եւ հատուկ տեխնիկայով զինելուն, ճառագայթային, քիմիական ու կենսաբանական համատեղ պաշտպանության ձեւավորմանը:

ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստի ընթացքում նախատեսվում էր ընդունել նաեւ Հավաքական անվտանգության խորհրդի հռչակագիրը:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գագաթաժողովից հետո, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը չի ստորագրել հռչակագիրն ու Հայաստանին օգնելու համատեղ միջոցառումների մասին փաստաթուղթը: Ըստ Փաշինյանի, նշված նախագծերը «բավականաչափ մշակված չեն եւ իրենց ներկայիս տեսքով պատրաստ չեն ստորագրման համար»:

Վարչապետը բացատրեց նաեւ ստորագրումից հրաժարվելու պատճառը եւ նշեց, որ դաշնակիցները հստակ քաղաքական գնահատական չեն տվել Ադրբեջանի ագրեսիային:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԹՈՒՆԻՍՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ աշխատանքային այցով գտնվում էր Թունիսում եւ մասնակցեց Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) 18-րդ գագաթաժողովին: Գագաթաժողովում վարչապետ Փաշինյանը հանդես եկավ ելույթով:*



Այցի շրջանակում, վարչապետը երկկողմ հանդիպումներ անցկացրեց՝ տարբեր երկրների առաջնորդների հետ:

Մասնավորապես, Նիկոլ Փաշինյանը հանդիպեց Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնին:

Նիկոլ Փաշինյանն ու Էմանուել Մակրոնը մտքեր փոխանակեցին նաեւ ս.թ. հոկտեմբերին Պրահայում կայացած Հայաստանի, Ֆրանսիայի, Ադրբեջանի առաջնորդների եւ Եվրոպական խորհրդի նախագահի քառակողմ հանդիպման արդյունքների վերաբերյալ: Կարեւորվեց Հարավային Կովկասում կայունության եւ անվտանգության ամրապնդման ուղղությամբ քայլերի իրականացումը:

Հայաստանի եւ Ֆրանսիայի ղեկավարները քննարկեցին նաեւ հայ-ֆրանսիական երկկողմ փոխգործակցության հետագա զարգացմանն առնչվող հարցեր:

Գագաթաժողովի շրջանակներում, Հայաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ նաեւ Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոյի, Մոնտենեգրոյի վարչապետ Դրիտան Աբազովիչի հետ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՆ



*Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունեց Ուկրաինայից ժամանած հայ գործարարներին:*

Իր խոսքում Հայաստանի նախագահը մասնավորապես ընդգծեց, որ ուկրաինահայ գործարարների այցելությունն առանձնահատուկ գնահատելի է՝ նկատի ունենալով նաեւ Ուկրաինայում տիրող իրավիճակը: Նախագահը շեշտեց, որ նման ձեւաչափի այցը նոր խթան կդառնա հայ-ուկրաինական գործարար կապերի եւ առեւտրա-տնտեսական փոխգործակցության զարգացման համար ու նշանակալի ազդեցություն կունենա նաեւ ուկրաինահայ համայնքի կյանքում:

Հանդիպմանը Հայաստանի նախագահն անդրադարձավ Հայաստանի տնտեսական իրողություններին, տնտեսության ոլորտում իրականացվող բարեփոխումներին, որոնք միտված են նաեւ գործարար դաշտի տնտեսական միջավայրն առավել գրավիչ դարձնելուն, նոր տեխնոլոգիաների ու թվայնացման համակարգերի ներդրմանը:

Ուկրաինահայ գործարարների հետ հանդիպմանը անմիջական մթնոլորտում, Վահագն Խաչատուրյանը պատասխանեց հյուրերի հարցերին: Քննարկվեցին Ուկրաինայի հայկական համայնքի հետ հարաբերություններն առավել սերտացնելուն եւ գործարար շփումների մակարդակը բարձրացնելուն ուղղված հարցեր:

## ՄԱԿ-Ի ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

*Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի՝ խաղաղությանն ուղղված գործողությունների գծով տեղակալ Ժան-Պիեռ Լակրուան իր երախտագիտությունն է հայտնել ՄԱԿ-ի խաղաղապահ գործողություններին Հայաստանի ցուցաբերած վճռական աջակցության եւ ՄԱԿ-ի դրոշի ներքո տեղակայված ռազմական ու ոստիկանական անձնակազմի ծառայության եւ անձնազոհության համար:*




ՄԱԿ-ի անդամ 193 պետություններից Հայաստանը ներկայումս 79-րդն է ՄԱԿ-ի խաղաղությանն ուղղված գործողություններին ամենամեծ թվով ռազմական անձնակազմի տրամադրման առումով. ներառում է 32 խաղաղապահների, այդ թվում՝ երեք կին ծառայողների, որոնք ծառայում են Լիբանանում ՄԱԿ-ի ժամանակավոր ուժերի (UNIFIL) կազմում:

Առաջին հայ խաղաղապահը Լիբանանում ՄԱԿ-ի ժամանակավոր ուժերի (UNIFIL) կազմում տեղակայվել է 2012թ. փետրվարին: 2014 թվականի նոյեմբերից ի վեր, երբ Լիբանան ժամանեց Հայաստանից առաջին զորախումբը՝ բաղկացած 33 զինվորականից, Հայաստանը մշտական ներդրում ունի առաքելության մեջ:

Հայաստանը նախկինում մի քանի տարի շարունակ նաեւ սահմանափակ թվով խաղաղապահներ է տեղակայել ՄԱԿ-ի հովանու ներքո Մալիում Բազմազգ միացյալ կայունացման առաքելության (MINUSMA) կազմում:

### «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԱՆՑԿԱՑՐԵՑ 25-ՐԴ ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆԸ

***«Մենք ստեղծում ենք կենսունակ համայնքներ» խորագրի ներքո նոյեմբերի 24-ին անցկացվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի (ՀՀՀ) 25-րդ հեռուստամարաթոնը, որի ընթացքում արդեն հավաքագրվել է 11 003 439. 51 ԱՄՆ դոլար: Դրամահավաք-միջոցառումները դեռ շարունակվում են, իսկ վերջնական արդյունքները կամփոփվեն փարեվերջին:***

***«Հեռուստամարաթոն 2022»-ի շրջանակում Հայաստանից եւ Արցախից հանգանակվել է 1 000 280.51 ԱՄՆ դոլար, տեղական մարմինների կողմից՝ ԱՄՆ - 5 000 250 ԱՄՆ դոլար, Ֆրանսիա -3 284 000 ԱՄՆ դոլար, Մեծ Բրիտանիա- 700 000 ԱՄՆ դոլար, Կանադա (Տորոնտո)-547 272 ԱՄՆ դոլար: Նվիրատվություններ են կատարվել Կանադայից (Մոնրեալ) 204 000 ԱՄՆ դոլար, Բրազիլիայից 100 000 ԱՄՆ դոլար, Շվեյցարիայից 80 000 ԱՄՆ դոլար, Գերմանիայից 52 660 ԱՄՆ դոլար, Արգենտինայից 25 000 ԱՄՆ-ից դոլար, Ավստրիայից 6 144 ԱՄՆ դոլար, Ռումինիայից 3 833 ԱՄՆ դոլար:***

### ՍՏԵՂԾՎԵԼ ԵՆ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԹՎՈՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

***Հայաստանում 2022 թվականին գրանցված աշխատատեղերի բացարձակ ռեկորդ է սահմանվել:***

***Ինչպես հայտարարեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հոկտեմբերին գրանցվել է 696 հազար 445 աշխատատեղ: Նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ, այս տարի 42 հազար 623-ով ավելի աշխատատեղ կա:***

***- 2018 թվականի հոկտեմբերի համեմատ 110 հազար 266 նոր աշխատատեղ է ձեւավորվել,- ասաց նա:***

***Նիկոլ Փաշինյանի խոսքով, 2018 թվականի հոկտեմբերի համեմատ, 2022 թվականի հոկտեմբերին 10 միլիարդ դրամով ավելի եկամտային հարկ է հավաքագրվել:***

### 10 ԱՄՍՈՒՄ՝ 14,5 ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

***Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022 թվականի հունվար-հոկտեմբերին 14,5 տոկոսով ավելացել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:***

***Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, արդյունաբերական արտադրանքի ծավալը այս տարվա հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա հունվար-հոկտեմբերի համեմատ, ավելացել է 9,9 տոկոսով: Շինարարության ծավալը այս տարի 10 ամսում, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, ավելացել է 14,4 տոկոսով:***

***Առեւտրի շրջանառությունում հունվար-հոկտեմբերին, 2021-ի նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացումը կազմել է 15,5 տոկոս:***

***2022 թվականի հունվար-հոկտեմբերին մատուցված ծառայությունների ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 27,9 տոկոսով: Իսկ այս տարվա 10 ամիսների ընթացքում սպառողական գների ինդեքսը, 2021-ի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 8.7 տոկոսով:***

### ԳՐԱՆՑՎԵԼ Է ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՃ

***Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, 2022 թվականի երրորդ եռամսյակում՝ հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին, երկրի համախառն ներքին արդյունքը դրամական ցուցանիշներով կազմել է 2 տրիլիոն 379 մլրդ 316 մլն դրամ: 2021-ի նույն ժամանակաշրջանում այդ ցուցանիշը կազմել է 2 տրիլիոն 212 մլրդ 92 մլն դրամ:***

ԽԱՄԱՃԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

# «ԳԱՐՐԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՏՈՒՆԸ» ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ՌՈՒՍԹԱՎՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

*Վիրահայոց թեմի Ռուսթավիի «Սուրբ Գրիգոր Նարեկացի» Հոգեւոր կենտրոնի սաները հյուրընկալվեցին Թբիլիսիի «Գարրի Դավթյանի տուն» խամաճիկային թատրոնում:*



Հոգեւոր կենտրոնի ղեկավար Տեր Հովսեփ քահանա Հարությունյանը փոխանցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի օրհնությունը եւ շնորհակալություն հայտնեց «Գարրի Դավթյանի տուն» թատրոնի տնօրեն Ժաննա Դավթյանին Հոգեւոր կենտրոնի «Նաիրի» նախակրթարանի եւ հայերենի ուսուցման դասարանի ռուսթավցի 14 սաներին ու ուսուցչուհիներ Աիդա Փոլադյանին եւ Անի Մինասյանին հյուրընկալելու համար:

Տիկին Ժաննան սիրով ներկայացրեց թատրոնում տեղ գտած խամաճիկներին, պատմեց ստեղծման խորհրդանշական պատմությունը: Այնուհետեւ ռուսթավցի երեխաներին ցույց տվեց խամաճիկների դերակատարումով մի հատված:

ՍՊՈՐՏ

## ԿԱՏԱՐ 2022. ՄԵԿՆԱՐԿԵՑ ՖՈՒՏԲՈԼԻ ԱՇԽԱՐՀԻ 22-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 20-ին Կատարի մայրաքաղաք Դոհայի «Էլ Բայտ» մարզադաշտում կայացավ աշխարհի 22-րդ առաջնության բացման պաշտոնական արարողությունը:

Աշխարհի այս առաջնությունը բացառիկ է, քանի որ անցկացվում է ձմռանը, եւ երկրորդը՝ ասիական երկրում (առաջինը 2022 թվականին Կորեայում ու Ճապոնիայում էր):

Ֆուտբոլի աշխարհի այս առաջնությունն անցկացվում է մարզադաշտերում, որոնք լինելու են փակ եւ ունեն հատուկ օդորակման համակարգ: Եվ այս աշխարհի առաջնությունը վերջինն է, որին մասնակցում է 32, իսկ հաջորդիվ կայանալիք առաջնություններում կմասնակցի 48 թիմ:

Խմբային մրցաշարում 8 խմբի առաջին երկու տեղերը զբաղեցրած թիմերը կշարունակեն պայքարը մեկ ութերորդ եզրափակիչ փուլում:

Ինչ վերաբերում է խմբային մրցաշարի առաջին հանդիպումներին, ապա դրանք հետաքրքիր անակնկալներ մատուցեցին ֆուտբոլի երկրպագուներին: Այսպես. անակնկալների թվին կարելի է դասել 1:2 հաշվով արգենտինացիների պարտությունը Սաուդիան Արաբիայի թիմից, գերմանացիներինը՝ ճապոնացիներից: Խմբային մրցաշարի անդրանիկ փուլում աչքի ընկան իսպանացիները, ովքեր 7 անպատասխան գնդակ անցկացրին Կոստա-Ռիկայի դարպաս, աշխարհի գործող չեմպիոն ֆրանսիացիները, ովքեր 5:1 հաշվով հաղթեցին Ավստրիայի թիմին, բրազիլացիները, ովքեր 2:0 հաշվով առավելության հասան Սերբիայի նկատմամբ:

Հիշեցնենք, որ Մունդիալի եզրափակիչը կկայանա դեկտեմբերի 18-ին:

## ՎՐԱՑ ՌԵԳԲԻՍՏՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Նոյեմբերյան վերջին թեստավորման հանդիպմանը, ռեգբիի Վրաստանի հավաքականը 13:12 հաշվով պարտության մատնեց Ուելսի ուժեղագույն թիմին:

Նշենք, որ վերոնշյալ հաղթանակը վրաց ռեգբիստների համար առաջինն էր աշխարհի ուժեղագույն թիմերի TIER 1 ակումբի թիմի նկատմամբ եւ երկրորդը՝ «Վեց ազգերի» ակումբի թիմի նկատմամբ:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# ԿԱԽԱ ԿԱԼԱՁԵ. «ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔԵՐԸ ԿՀԱՆՁՆՎԵՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ»



*Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, օրենսդրական փոփոխությունների համաձայն, ավարտված օբյեկտները հնարավոր է շահագործման հանձնել որոշակի պայմաններով:*

- Ինչպես գիտեք, մայրաքաղաքի ամենամեծ խնդիրներից ու մարտահրավերներից մեկն ավարտված օբյեկտներն են, որոնք մինչ օրս շահագործման չեն հանձնվել: Ցավոք, մարդիկ տասնյակ տարիներ ապրել են նման շենքերում: Պատճառը շինարարական կազմակերպությունների/շինարարների կողմից օրենքի խախտմամբ շինարարությունն է եղել՝ ավելի շատ եկամուտներ ստանալու նպատակով,- ասաց Կախա Կալաձեն:

Ըստ քաղաքապետի, փոփոխությունների շնորհիվ հնարավոր է դարձել շահագործման հանձնել այնպիսի շենքեր ու շինություններ, որոնց շինաշխատանքն ավարտվել է 2020 թվականի օգոստոսի 18-ին, եւ միաժամանակ դրանք կառուցվել են թույլտվության պայմանների խախտմամբ:

Կախա Կալաձեն նշեց, որ նման շենքերը շահագործման հանձնելու համար, ըստ օրենքի, քաղաքապետարան դիմելու վերջնաժամկետը 2 տարի է:

Նշենք, որ հուլիսի վերջին արդեն լրացել է հայտերի ընդունման մեկ տարին, այս պահին քաղաքապետարան է դիմել 667 անձ, իսկ այսօրվա դրությամբ շահագործման է հանձնվել 167 օբյեկտ: Դիմումները վերանայվում են:

Թբիլիսիի քաղաքապետն անդրադարձավ նաեւ ապօրինի շինությունների թեմային:

- Մենք ավելացրել ենք տուգանքները, խստացրել կանոնակարգերը: Խորհրդարանի հետ համագործակցությամբ օրենսդրական փոփոխություններ են կատարվել: Տուգանվելուց հետո, եթե նույն ընկերությունը շարունակի ապօրինի շինարարությունը, որը քրեորեն պատժելի արարք է, շատ կարեւոր է, եւ մեզ հնարավորություն կտա կանխել նման շինարարությունը մայրաքաղաքում,- նշեց Կախա Կալաձեն:

Շահումյանցի եւ թբիլիսցի ազգականներն ու բարեկամներն իրենց ցավակցությունն են հայտնում Թամար Սիրունյան-Դեմիրճյանին, Երեւանում վախճանված սիրելի մոր՝

***Լարիսա Երվանդի ՄՈՍԵՍՈՎԱՅԻ***

մահվան կապակցությամբ եւ վշտակցում հանգուցյալի հարազատներին:





# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Նեղուց Եվրոպայի եւ Աֆրիկայի միջեւ: 5.Հովհ.Թումանյանի հեքիաթի հերոս: 9.Հայոց աստվածուհի: 11.Ձկների խումբը: 13.Հրետանային զինամթերք: 14.Ցուցական դերանուն: 15.Էլի, կրկին: 16.Արագ ընթանալ, թռչել: 19.Ճապոնիայի դրամական միավորը: 22.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 23.Հերոսին կամ մրցույթում հաղթողին տրվող մետաղյա նշան: 25.Սիրիայում ապրող ժողովուրդ: 26.Որեւէ շինության հատակագիծ: 27.... Չորրորդ Հայոց կաթողիկոս: 29.Վրաց հայտնի դերասան ... Գոծիաշվիլի: 31.Աշխարհի հրաշալիքների թիվը: 32.Միտք, գաղափար: 34.Ավտոմեքենաների ապահովագրմամբ զբաղվող գործակալություն (հապավումը): 36.... պես կտրող: 37.Տոհմային համայնք կելտերի մոտ: 39.ՄԱԿ-ի նախկին քարտուղար: 40.Մարմնի պակասություն, թերություն: 41.Նոտաներից չորրորդը: 42.Տոհմ, ժառանգորդ: 43.Ինքնաթիռի մակնիշ: 44.Վախ, երկյուղ: 46.«Թռի-... մի ճպուռ» («Ճպուռն ու մրջյունը»): 47.Քաջ, անվախ: 48.Աստվածաշնչյան գետ: 51.Հայկական ֆիլմ: 53.Անձնական դերանուն: 54.Աշուղի գործիք: 55.Լազիկայում ապրող ժողովուրդ: 57.Գումարման արդյունքը: 58.Թռչնի տեսակ: 59.Շաբաթվա օր: 60.Համադասական շաղկապ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Կարծախում ծնված հայ մեծ աշուղ: 2.Հանրահայտ դերասան ... Ներսիսյան: 3.Հայաստանի մայր գետը: 4.Հրացանը Հովհ. Թումանյանի լեզվում: 6.Անուն դնել, կոչել: 7.Նար-Դոսի գրական հերոսուհի: 8.Հայերենի վերջածանց: 10.Վրաց մեծ գրող ... Գրիշաշվիլի: 12.Առյուծի ձագ: 17.Ամպի գոռոց, որոտ: 18.Թբիլիսիի Պետրոս ...ի անվան դրամատիկական թատրոն: 20.Պայմանի շաղկապ: 21.Ֆրանսիացի հանրահայտ նկարիչ: 22.Րաֆֆու պատմավեպերից: 24.Ավստրիացի նշանավոր կոմպոզիտոր: 27.Վրաց մեծ գրող, հասարակական գործիչ: 28.Հունաստանի քաղաքամայրը: 30.Վանական համալիր Հայաստանում: 33.Մեծ մարգարե: 35.Լեռնաշղթա Կենտրոնական Ասիայում: 37.Քիմիական տարր: 38.Թատրոնի եւ կինոյի հայտնի դերասան ... Գասպարյան: 41.Պարսիկ մեծ բանաստեղծ: 45.«Սիրուն թիթեռ, ինձ ...» («Թիթեռ» երգից): 47.Յասոնի նավը: 49.Հայոց թագավոր: 50.Լրիվ, ամբողջապես: 52.Ե՛վ Շագալ, ե՛ւ Արեն: 56.«... ու զարմանք երազներ են, Պոկված ծվեն-ծվիկներ» (Ավ.Իսահակյան):

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Վայրէջք: 9.Համով: 10.Նունե: 11.Տասնյոթ: 13.Ղուկաս: 16.Տղա: 17.Ղեկ: 19.Վադուց: 22.Գաճաճ: 24.Վեներա: 25.Ռիսկ: 27.Թելատու: 29.Մակույկ: 32.Նյասա: 33.Մանկիկ: 35.Յարա: 38.Լիա: 40.Օֆսեթ: 41.Բլից: 44.Աբիգ: 47.Վուր: 48.Մղոն: 50.Ատելի: 51.Երե: 52.Գե: 53.Նալ: 54.Ճալ: 55.Ամիս:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Խառատ: 2.Իրինա: 3.Իջնող: 4.Ահեղ: 5.Ամոկ: 6.Կվաս: 8.Քութեշ: 12.Սղաճ: 14.Ուլան: 15.Ամուր: 18.Վճիտ: 19.Վեգաս: 20.Դեկու: 21.Ցանկ: 23.Առարկա: 26.Սունկ: 28.Եռալ: 29.Մաղ: 30.Կայֆ: 31.Յուրե: 34.Նիկիտա: 36.Աստղ: 37.Աքանես: 39.Ջիու: 42.Լվիճ: 43.Ցրել: 45.Բան: 46.Գել: 48.Մեա: 49.Ոգի:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445